



*Համարը N 742-Ն*  
*Տիպը Որոշում*  
*Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2016.07.27/56(1236) Հոդ.728*  
*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն*  
*Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.09.2016*

*Տեսակը Հիմնական*  
*Կարգավիճակը Գործում է*  
*Ընդունման վայրը Երևան*  
*Ընդունման ամսաթիվը 14.07.2016*  
*Ստորագրման ամսաթիվը 20.07.2016*  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**Գապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 հուլիսի 2016 թվականի N 742-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
  - 1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.
  - 2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայության կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Հ. Աբրահամյան**

2016 թ. հուլիսի 20  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
հուլիսի 14-ի N 742-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պրոբացիայի պետական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) նախարարության առանձնացված ստորաբաժանում է:
2. Ծառայությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Ծառայությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
3. Իր գործունեության ընթացքում ծառայությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքներով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:
4. Ծառայությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Ծառայությունն օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Ծառայության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Արշակունյաց 63:
7. Ծառայությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու այլ անհատականացման միջոցներ:

**II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

8. Ծառայության նպատակներն են՝
  - 1) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովման միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն ապահովելու միջոցով.
  - 2) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ՝ նաև նրանց ֆիզիկական ու հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրանց դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.
  - 3) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.
  - 4) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հաշտեցումը.
  - 5) քրեական արդարադատության իրականացմանն աջակցությունը:
9. Ծառայության խնդիրներն են՝
  - 1) քրեական վարույթի ընթացքում «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.
  - 2) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.
  - 3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային խափանման միջոցների կատարման անհատական պլանավորումը՝ գնահատելով ռիսկերն ու հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.
  - 4) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու, դատվածությունը հանելու վերաբերյալ պրոբացիայի շահառուի մասին խորհրդատվական զեկույցների տրամադրումը.
  - 5) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացումը.
  - 6) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:

**III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

10. Ծառայությունը՝
  - 1) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

- 2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.
- 3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.
- 4) տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ.
- 5) իրականացնում է վերահսկողություն պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.
- 6) իրականացնում է հաշտարարություն.
- 7) իրականացնում է վերատոցիալականացման միջոցառումներ.
- 8) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

11. Ծառայության գործունեությունը կազմակերպում և ընդհանուր վերահսկողություն է իրականացնում նախարարը: Ծառայության անմիջական ղեկավարումն իրականացնում է ծառայության ղեկավարը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Իր գործունեության ընթացքում ծառայության ղեկավարն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքներով, Հայաստանի Հանրապետության օրենքներով, նախարարության կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

12. Ծառայության ղեկավարը հաշվետու է նախարարին, ծառայության գործունեությունը համակարգող՝ նախարարի համապատասխան տեղակալին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին:

13. Ծառայության ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է ծառայության ղեկավարի տեղակալներից մեկը՝ ծառայության ղեկավարի առաջարկությամբ:

14. Ծառայության ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինող անձին նշանակում է նախարարը:

15. Ծառայության ղեկավարը՝  
1) ապահովում է ծառայության բնականոն գործունեությունը և պատասխանատու է ծառայության առջև դրված խնդիրների լուծման համար.

2) ապահովում է «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) իր իրավասության սահմաններում ընդունում է հրամաններ, որոշումներ, տալիս է ցուցումներ.

4) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս է լիազորագրեր՝ ծառայության անունից հանդես գալու համար.

5) օրենքով, այլ իրավական ակտերով և հիմնադրի սահմանած կարգով տնօրինում է ծառայությանն ամրացված գույքը.

6) ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.

7) ներկայացնում է ծառայությունն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

8) իր իրավասության սահմաններում քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

9) ներկայացնում է միջնորդություն ծառայությունում քաղաքացիական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

10) նախարարին ներկայացնում է առաջարկություններ ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

16. Ծառայության ղեկավարի տեղակալը՝  
1) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառում ծառայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները, կատարում աշխատանքների վերլուծություն.

2) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

3) իրեն հանձնարարված բնագավառում համակարգում է զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

- 4) ծառայության ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառում տիրող վիճակի մասին.
- 5) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառում պետական կառավարման մարմնի ղեկավարի և ծառայության ղեկավարի՝ սահմանված կարգով ընդունված իրավական ակտերի պահանջների պատշաճ և ժամանակին կատարումը.
- 6) ծառայության ղեկավարին ներկայացնում է միջնորդություն ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու վերաբերյալ.
- 7) իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, տալիս ցուցումներ.
- 8) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

17. Օրենքով ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

18. Ծառայությունն ունի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներ: Ծառայության աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, ովքեր պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

19. Ծառայության վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի առաջին  
տեղակալ**

**Գ. Դումանյան**

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
հունիսի 14-ի N 742-Ն որոշման

**Կ Ա Ռ ՈՒ Յ Վ Ա Ծ Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

**1. Ծառայության մարմիններ՝**

- 1) կենտրոնական մարմին
- 2) Երևանի քաղաքային մարմին
- 3) մարզային մարմիններ

**2. Կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ՝**

- 1) կազմակերպամեթոդական բաժին
- 2) հաշվառման և վիճակագրության բաժին
- 3) առաջին բաժին
- 4) ընդհանուր բաժին
- 5) նյութատեխնիկական մատակարարման և շահագործման բաժին

**3. Երևանի քաղաքային մարմնի տարածքային ստորաբաժանումներ՝**

- 1) առաջին բաժին
- 2) երկրորդ բաժին
- 3) երրորդ բաժին

**4. Մարզային մարմիններ՝**

- 1) Արագածոտնի մարզային մարմին

- 2) Արարատի մարզային մարմին
- 3) Արմավիրի մարզային մարմին
- 4) Գեղարքունիքի մարզային մարմին
- 5) Լոռու մարզային մարմին
- 6) Կոտայքի մարզային մարմին
- 7) Շիրակի մարզային մարմին
- 8) Սյունիքի մարզային մարմին
- 9) Վայոց ձորի մարզային մարմին
- 10) Տավուշի մարզային մարմին

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի առաջին  
տեղակալ**

**Գ. Դումանյան**